

ծանր ամբաստանութիւնը կանանց դէմ ալ կ'ուղղէ (143): Այս ցաւագին անկման պատճառն անոնց արանց գայթակղական օրինակին հետ եւ քան զայն աւելի՛ որոնելու չենք անոնց «գինեբեր այգեաց» մէջ (Նդիշ. 174): Սկզբունքը միշտ նոյն է երկու սեռից համար եւս. նոյն է եւ արդիւնքը, որ կը տեւէ դեռ իւր բոլոր ծանրութեամբ ժ.Ֆ. դարուն, ինչպէս կ'երեւի Ալաւկայ որդւոյն անոնց դէմ գրած կանոններէն (Ծ, Ծէ):

Դ. Ռամիկ կինն ալ զերծ չէ մնացած բամբասանաց առիթներէ: Բարձր դասու սեռակցաց գայթակղական վարմունքը քաջալեր եղած է հետեւելու անոնց: Մեր եկեղեցական կանոնաց մէջ ստէպ կը պատահինք անոնց անկարգ բարուց ու կենակցութեանց մասին յիշատակութեանց, որոցմէ ուշագրաւ են մանաւանդ Ալաւկայ որդւոյն (Ժէ-Ի, ՀԵ) եւ Ա. Կոստանդնի (Կիր. 171) խօսքերը: Նշանաւոր է ասոցմէ միոյն գործը, մեզերայի մը, որ յանդգնեցաւ մինչեւ իսկ մահացուցիչ դաշունով լռեցնել Ստեփանոս սիւնեցւոյն յանդիմանիչ բերանը, յետոյ իրենը բանալու համար ի կոծ եւ ապաշաւ (Որբ. 101-2): Շնորհալին հարկ կը համարէր ոգորելու իւր ժամանակի կանանց պչրանաց դէմ, ի մէջ